

ՓՈԽՇՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և նույնասեռական, երկսեռական, գենդերափոխ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում ներգրավված մի շարք հասարակական կազմակերպությունների միջև

ք. Ծաղկաձոր

4 հուլիսի 2011թ.

Այս Փոխըմբռման հուշագիրը (ՓՀ) կնքվում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի /այսուհետ՝ Պաշտպան/ և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպության /այսուհետ՝ Հասարակական կազմակերպություն/ միջև /այսուհետ՝ Կողմեր/:

Նկատի ունենալով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով վերապահված՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու (այդ թվում՝ նաև քաղաքացու) իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտում իրավասություններն ու առաքելությունը:

Հաշվի առնելով այն, որ Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից: Պաշտպանին կարող են դիմել նաև իրավաբանական անձինք:

Ելնելով այն հանգամանքից, որ նույնասեռական, երկսեռական, գենդերափոխ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի Հասարակական կազմակերպությունները նույնասեռական, երկսեռական, գենդերափոխ անձանց իրավունքները պաշտպանելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով ստեղծված հասարակական միավորման տեսակ է, որոնք գործում են օրինականության, հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

Նկատի առնելով այն, որ Կողմերը կիսում են նմանատիպ առաքելություններ և զանկանում են համագործակցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող՝ նույնասեռական, երկսեռական, գենդերափոխ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում, որպեսզի բարձրացնեն նշված անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի զարգացմանն ուղղված իրենց ջանքերի արդյունավետությունը,

Այսուհետ՝ Կողմերը համաձայնում են համագործակցել հետևյալի վերաբերյալ.

Հոդված 1 Նպատակը

Այս ՓՀ-ի նպատակն է ապահովել համագործակցության շրջանակ և օժանդակել Կողմերի միջև գործակցությանը ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտում, այն է նույնասեռական, երկսեռական, գենդերափոխ անձանց իրավունքների պաշտպանություն:

Հոդված 2

Համագործակցության ոլորտները

Կողմերը համաձայնում են համագործակցել գործունեության հետևյալ ոլորտներում.

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպան – Հասարակական կազմակերպություններ գործակցության զարգացման համապարփակ հայեցակարգի մշակում և կենսագործում /ՓՀ-ին կից հավելվածով, որում ներառված խնդիրների լուծման պարագայում առաջ կքաշվեն նորերը և կսահմանվեն ժամկետներ/,
- փորձի և գիտելիքների փոխանցում,
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպան – Հասարակական կազմակերպություններ համագործակցության մասին հանրային իրազեկության ուղղված քարոզարշավ,
- ՓՀ-ի շրջանակներում իրականացվող աշխատանքների համարկարգում և դրանց մասին տեղեկությունների տարածում,
- Հասարակական կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունների, հետազոտությունների, առաջ քաշված առաջարկների քննարկում և անհրաժեշտության դեպքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից օրենսդրական նախաձեռնության առաջարկ ՀՀ կառավարությանը կամ Ազգային ժողովին,
- Հասարակական կազմակերպությունների մարզկենտրոնների հետ մշտական աշխատանք և այդ մարզկենտրոնների օգտագործում որպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ռեսուրսային կենտրոններ
- Կոնկրետ դիմում-բողոքների վերահասցեագրում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

Հոդված 3

Խորհրդակցում և տեղեկատվության փոխանակում

3.1 Կողմերը պարբերաբար միմյանց տեղեկացնելու և խորհրդակցելու են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այնպիսի հարցերի շուրջ, որոնք Կողմերի կարծիքով հնարավոր է, որ հանգեցնեն երկկողմանի գործակցության:

3.2 Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում գաղտնիք պարունակող հարցերի շուրջ խորհրդակցումը և տեղեկատվության ու փաստաթղթերի փոխանակումը կատարվելու են առանց վնասելու այնպիսի ընթացակարգեր, որոնք կարող են պահանջվել՝ ապահովելու

համար որոշակի տեղեկատվության և փաստաթղթերի գաղտնիություն և հասանելիության
սահմանափակ բնույթ: Նման ընթացակարգերն ուժի մեջ կլինեն սույն փոխըմբռնման
հուշագրի և նշված գործակցության շրջանակներում Կողմերի միջև ստորագրված ցանկացած
այլ համաձայնագրերի դադարեցումից հետո:

3.3 Կողմերը սահմանված պարբերականությամբ անցկացնելու են հանդիպումներ՝
վերանայելու սույն ՓՀ-ի ներքո իրականացվող գործողությունների կատարման ընթացքը և
ծրագրավորելու, պլանավորելու ապագա գործողությունները:

3.4 Կողմերը կարող են միմյանց հրավիրել՝ ուղարկելու դիտորդներ այն հանդիպումներին և
համաժողովներին, որոնք կկազմակերպվեն նրանց կողմից կամ նրանց հովանու ներքո,
որոնց մասնակցելը, ըստ Կողմերից որևէ մեկի կարծիքի, կարող է հետաքրքրել հակառակ
կողմին:

Հոդված 4

Փոխըմբռնման հուշագրի իրականացումը

4.1 Որոշակի գործողությունների իրականացման նպատակով Կողմերը, կարող են կնքել
համաֆինանսավորման համաձայնագրեր, ներգրավել դոնոր կազմակերպությունների:

4.2 Կողմերից ոչ մեկը չի կարող լինել մյուսի գործակալը, ներկայացուցիչը կամ որևէ
երրորդ կողմի համատեղ գործընկերը: Կողմերից ոչ մեկը մյուս կողմի անունից չի կարող
մտնել պայմանագրային հարաբերությունների մեջ կամ ստանձնել հանձնառություն:

Հոդված 5

Անվանման և խորհրդանիշի օգտագործումը

5.1 Կողմերից որևէ մեկը չի կարող օգտագործել մյուս կողմի կամ մյուս կողմի որևէ
ստորաբաժանման և /կամ/ մասնաճյուղի անվանումը, խորհրդանիշը կամ ապրանքանիշերը
կամ նրանց որևէ հապավում՝ առանց յուրաքանչյուր նման դեպքում նախօրոք ստանալու
մյուս կողմի հստակ գրավոր համաձայնությունը:

5.2 Գործընկերներն ընդունում են, որ ծանոթ են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
գրասենյակի գործունեությանը, այդ գործունեության նպատակներին և գիտակցում են, որ ՀՀ
մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի անվանումը և խորհրդանիշը չեն կարող
առնչվել որևէ քաղաքական կամ մասնավոր շահերի կամ այլ կերպ օգտագործվել այնպիսի
եղանակով, որը հակասության մեջ կլինի Պաշտպանի կարգավիճակի, հեղինակության և
չեզոքության հետ:

Հոդված 6

Տնողությունը, դադարեցումը, փոփոխումը

6.1 Սույն փոխըմբռնման հուշագրի ներքո առաջարկվող համագործակցությունը ոչ բացառիկ պայմաններով է: Այն մեկնարկում է 04.06.2011թ.-ին և ավարտվելու է 01.02.2017թ.-ին, եթե մինչ այդ Կողմերից որևէ մեկը չդադարեցնի այն: Կողմերը կարող են գրավոր համաձայնության գալ՝ երկարաձգելու և ընդլայնելու ներկա փոխըմբռնման հուշագիրը:

6.2 ՓՀ-ի գործողության դադարեցման դեպքում դրա ներքո կնքված համաֆինանսավորման կամ ծրագրի շրջանակներում համագործակցության ցանկացած համաձայնագրեր և ցանկացած ծրագրային փաստաթղթեր նույնպես կարող են լուծվել՝ նման համաձայնագրերում պարունակվող լուծման մասին դրույթների համապատասխան: Այդ դեպքում Կողմերը ձեռնարկելու են անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու, որպեսզի սույն փոխըմբռնման հուշագրի, համաֆինանսավորման համաձայնագրերի և ծրագրային փաստաթղթերի ներքո իրականացվող գործողությունները հասցվեն պատշաճ և կանոնավոր ավարտի:

6.3 Կողմերից որևէ մեկի հետ սույն հուշագրի դադարեցումը չի հանգեցնում մյուս կողմերի հետ հուշագրի գործողության դադարեցման:

6.4 Այս փոխըմբռնման հուշագիրը կարող է փոփոխվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

6.5 Այս փոխըմբռնման հուշագիրը բաց է Պաշտպանի համաձայնությամբ նրան կարող է միանալ ցանկացած հասարակական կազմակերպություն ցանկացած պահի:

Հոդված 7

Ծանուցումը և հասցեները

Սույն փոխըմբռնման հուշագրի ներքո պահանջվող կամ հանձնման թույլտվությունն ուսացած կամ ներկայացված ցանկացած ծանուցում կամ պահանջագիր պետք է լինի գրավոր: Կհամարվի, որ նման ծանուցումը կամ պահանջագիրը պատշաճ կերպով տրվել կամ ներկայացվել է, երբ այն առձեռն, պատվիրված փոստով, առաքողի, հեռագրի կամ մալուխի միջոցով կփոխանցվի այն կողմին, որին պահանջվում է այն հանձնել կամ ներկայացնել՝ ստորև ներկայացված հասցեով կամ այլ այնպիսի հասցեով, որի մասին հետագայում կծանուցվի:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

Կարեն Անդրեասյան

հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 56ա

«Հանրային Տեղեկատվության և Գիտելիքի Կարիք»

ՀԿ նախագահ՝ Մամիկոն Հովսեփյան

հասցե՝ ք. Գյումրի, Կոտովսկու 37

Հոդված 8

Վեճերի կարգավորումը

Կողմերը սույն հուշագրի կնքումով պայմանավորվում են շարժվել ազնիվ մղումներով, որպեսզի բարեկամաբար կարգավորեն ցանկացած վեճ, հակասություն կամ վիճաբանք, որոնք կրիսեն սույն փոխըմբռնման հուշագրից: Այն դեպքերում, երբ Կողմերը ցանկանում են նման բարեկամական կարգավորման հասնել հաշտության միջոցով, կարող է կնքվել հաշտության համաձայնագիր:

Հոդված 9

Այլ հարցեր

Այս փոխըմբռնման հուշագիրը և դրան առնչվող ցանկացած համաֆինանսավորման համաձայնագիր և ծրագրային փաստաթուղթ ներկայացնում են սույն ՓՀ-ում արտահայտված խնդրի վերաբերյալ Կողմերի ամբողջական ընկալումը և փոխարինում են միևնույն խնդրի վերաբերյալ նախկինում կնքված բոլոր համաձայնագրերը: Սույն փոխըմբռնման հուշագրի որևէ դրույթի կենսագործման հարցում Կողմերից որևէ մեկի ձախողումը չի հանգեցնում խնդրո առարկա կամ սույն ՓՀ-ում ներառված այլ դրույթի իրականացումից հրաժարման: Սույն ՓՀ-ի որևէ դրույթի չեղյալ հայտարարումը կամ ի կատար ածելու անհնարինությունը չեն ազդում ՓՀ-ի ցանկացած այլ դրույթի իրավական ուժի կորստին:

Հոդված 11

Ուժի մեջ մտնելը

Սույն փոխըմբռնման հուշագիրը ստորագրված է երկու օրինակից, որն ուժի մեջ է մտնում Կողմերի միջև այն պատշաճ կարգով ստորագրելու պահից:

ԵՎ ՈՐՊԵՍ ՈՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ, Կողմերի՝ պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչները ստորև ստորագրում են՝


